ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1962 Общественные науки

ԴԻՏԱԿԱՆ ԽՐԱՏՈՒ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы истории

Ամսագրի ընթացիկ տարվա երկրորդ համարն սկսվում է ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Մ. Պ. Կիմի հոդվածով, որը նվիրված է ՍՍՌՄ-ի սոցիալիստական շինարարության պատմական փորձը ՍՄԿՊ XXII համագումարի որոշումների տեսակետից ուսումնասիրելու խնդիրներին: Հոդվածում ասված է.

ՍՄԿՊ XXII համագումարը գաղափարական նակատի աշխատողների, այդ թվում պատմաբանների առջև նոր, կարևոր ու հրատապ խնդիրներ է դրել: Այդ խնդիրները ձևակերպված են համագումարի փաստաթղթերի, նրա ծրագրային դրույթների մեջ: ՍՄԿՊ նոր Ծրագրի լույսով առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում ՍՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության պատմական փորձի ուսումնասիրությունը: Համագումարի նյութերը ընդլայնեցին պատմագիտական հետազոտությունների շրջանակը: Սովետական պատմագիտության խնդիրն է՝ պատմական կոնկրետ նյութերով ցույց տալ այն պայմարի բովանդակ վեհությունը, որը մղվել է հանուն սոցիալիզմի կառուցման, հանուն սոցիալիզմի գլխավոր նանապարհի, որով վաղ թե ուշ ընթանալու են աշխարհի բոլոր ժողովուրդները: Մեր երկրում սոցիալիստական շինարարության պատմական փորձը գիտականորեն ընդհանրացնելու համար անհրաժեշտ է, որ պատմագիտությունը իր ջանքերը կենտրոնացնի պատմական պրոցեսի այն առանցքային հարցերի ուսումնասիրության վրա, որոնք որոշիչ նշանակություն ունեն սոցիալիստական շինարարության փորձի գիտական ընդհանրացման համար, սոցիալիզմի և աստիճանաբար կոմունիզմին անցնելու դարաշրջանում հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտման համար: Այդ պրոբլեմներից շատերը մշտապես եղել են պատմաբանների տեսադաշտում, սակայն, դժբախտաբար, ասված է հոդվածում, պետք է արձանագրել, որ արդիականության կարևորագույն պրոբլեմների, ինչպես նաև սոցիալիստական շինարարության պատմության վերաբերյալ պատմագիտական խոշոր աշխատություններ դեռևս քիչ են ստեղծված: Կան նաև պրոբլեմներ, որոնք կարոտ են նոր լուսաբանության: Հոդվածագիրը այդպիսի հրատապ պրոբլեմներ է համարում սոցիալիստական պետության ու սոցիալիստական դեմոկրատիայի ստեղծման ու զարգացման պատմությունը: Տվյալ պրոբլեմը հետազոտելիս պետք է առանձին ուշադրություն նվիրել հետևյալ հարցերին. ա) պրոլետարիատի դիկտատուրայի պետությունն համաժողովրդական պետության վերածվելու պատմական պրոցեսին: բ) Պետական մի շարք ֆունկցիաների անցումին հասարակական կազմակերպությունների ձեռքը:

Մյուս պրոբլեմը սովետական բանվոր դասակարգի ու գյուղացիության ձևավորման, այդ աշխատավոր դասակարգերի դաշինքի զարգացման պատմությունն է: Պետք է կապիտալ աշխատություններ գրել սովետական բանվոր դասակարգի մասին, որը գլխավորել է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի, սոցիալիստական հասարակարգի կառուցման պայքարը և դարձել է սոցիալիզմի դարաշրջանի տիրապետող դասակարգը: Պատմական գրականությունը ադիտ է սովետական գյուղացիության պատմության հետազոտություններով: Գյուղացիության կոլեկտիվացման հարցերի հետ միասին, պետք է գրել նաև գյուղացիության գաղափարական վերադաստիարակման, նրա կուլտուրական ու մաղաքական աճի, գյուղի կենցաղի մասին:

Պարտիայի XXII համագումարի որոշումներից բիող խնդիրները պատմագիտության կողմից հաջողությամբ կատարելու համար,—գրում է Մ. Պ. Կիմը,—անհրաժեշտ է վճռականորեն բարձրացնել սովետական հասարակության պատմության հետազոտությունների գիտական մակարդակը:

Հոդի պահանջների մակարդակի վրա գտնվելու համար սովետական պատմագիտությունը պետք է ամենից առաջ մինչև վերջ հաղթահարի անհատի պաշտամունքի մնացուկները պատմագիտության մեջ, ստեղծագործական աշխատանք կատարի լենինյան նորմաների տարդիցիաների հիման վրա:

Վ. Պ. Դանիլովի հոդվածում պատմված է սովետական գյուղացիության և ՍՍՌՄ-ի կոլտնտեսային շինարարության պատմության շուրջը, 1961 թ. ապրիլի 18—21-ը, Մոսկվայում կայացած գիտական սեսիայի աշխատանքի մասին: Այդ սեսիայում լսվել են 27 զեկուցում ու հաղորդում: Մտքերի փոխանակությանը մասնակցել է 65 մարդ:

«Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ագրարային վերափոխումների սոցիալ-տնտեսական արդյունքները (1917—1920 թթ.)» թեմայով զեկուցման մեջ Յու. Ա. Պոլյակովը փորձել է պարզել դասակարգային ուժերի հարաբերակցության և գյուղում դրանց տեղաշարժման փոփոխությունները քաղաքացիական պատերազմի վերջում, այսինքն այն ժամանակ, երբ արդեն որոշվել էին ագրարային ռևոլյուցիոն վերափոխումների հիմնական արդյունքները, երբ գյուղը մոտեցել էր ՆԷՊ-ի հիման վրա կատարված սոցիալ-տնտեսական տեղաշարժերի ժամանակաշրջանին:

Սեսիայում ելույթ ունեցողները կանգ են առել գյուղում ռևոլյուցիայի լուծած բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական խնդիրների հարաբերակցության հարցի վրա: Հետաքրքրական է սեսիայում արտահայտված այն միտքը, որ առաջին սոցիալական պատերազմը, որը մղվում էր ֆեոդալական-կալվածատիրական ճնշումը վերացնելու համար, իրեն լիովին սպառեց միայն քաղաքացիական պատերազմում: Ինչ վերաբերում է երկրորդ սոցիալական պատերազմին, ապա այն ավարտվեց համատարած կոլեկտիվացում անցկացնելուց և կուլակությունը որպես դասակարգ վերացնելուց հետո:

Գիտական սեսիայի աշխատանքում զգալի տեղ են գրավել գյուղատնտեսության կոլեկտիվացումից առաջ սովետական գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնույթի և դրանց զարգացման հարցերը: Այս հարցերը քննարկելիս հատկապես վիճաբանություններ են ծավալվել կապիտալիստական հարաբերությունների ոլորտները սահմանելու վերաբերյալ գյուղի միջակ խավերի արտադրական հարաբերությունների բնույթի շուրջը: Սեսիայում մեծ ուշադրություն է նվիրվել սովետական կարգերի պայմաններում և նախառևոլյուցիոն ժամանակի պայմաններում մենատնտես գյուղացու սոցիալական զարգացման սկզբունքային տարբերությունների պարզաբանմանը: Մտքերի աշխույժ փոխանակությունն է առաջացրել գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման, համատարած կոլեկտիվացման հիմնական պրոբլեմների քննարկումը:

ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան պլենումի որոշումներով դրվեց մեր երկրում գյուղատնտեսության զարգացման և սովետական գյուղի պատմության նոր էտապի սկիզբը. Սեսիայում նշվել է, որ հիշյալ էտապին նվիրված աշխատություններ մեծ մասամբ հանդիսանում են պարտիայի և կառավարության միջոցառումների բնդհանուր տեսությունները, այս կամ այն չափով փաստական նյութերի լուսաբանում: Առկա են գյուղատնտեսության առանձին ճյուղերի զարգացման, հողագործության ու անասնապահական մթերքների արտադրության ավելացման համար մղվող պայքարի լուսաբանման դրական արդյունքները: Սակայն, կոլտնտեսային գյուղացիության որպես սովետական հասարակության դասակարգի, կյանքի ու գործունեության հետ կապված հարցերը, գյուղում կատարված սոցիալիստական տեղաշարժերը դեռևս չեն արժանացել պատմաբանների պատշաճ ուշադրությանը:

Սեսիան միաժամանակ վկայում է, որ վերջերս անել են ազրարագետ պատմաբանների կադրերը, որոնք ի վիճակի են լուծելու այն խնդիրները, որ հասարակական գիտությունների առջև դրել են պարտիայի XXII համագումարը և ՍՄԿՊ նոր Մրագիրը:

Ն. Ռ. Զեռնյակի հոդվածում քննության առարկա են դարձել ռեակցիոն բուրժուական պատմագրության գլխավոր տենդենցների վերլուծությունը: Հոդվածում հիմնականում քննադատված է բուրժուական պատմագրության կողմից հետեվյալ հարցերի մեկնաբանությունը. արտադրության եղանակի ազդեցությունը հասարակության զարգացման բնույթի վրա, արդի բուրժուական գիտության տեղը հասարակության կյանքում և պատմական առաջադիմության հարցը, որը սերտորեն կապված է հիշյալ պրոբլեմների հետ:

Ամսագրի այս համարում տպագրված են ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեի «Հելլենիստական Եգիպտոսի հասարակարգը», Մ. Ի. Խեյֆեցի «Ռևոլյուցիոն Երկրորդ իրադրությունը Ռուսաստանում» (1879—1881 թվականներին վերնախավերի ճգնաժամի հարցի շուրջը) և Գ. Ս. Տորչկովայի «Բուրժուա-դեմոկրատական կարգերի վերացումը Գերմանիայում ֆաշիզմի տարիներին» հոդվածները. գրախոսություն՝ «Համաշխարհային պատմություն» 8-րդ հատորի մասին: Բազմազան նյութեր են զետեղված նաև ՍՍՌՄ-ում և արտասահմանում պատմական գիտությանը նվիրված բաժիններում:

История СССР

Երկամսյա հանդեսի 1962 թ. առաջին համարի «Դեպի ստեղծագործական նոր վերելք» վերնագրով առաջնորդող հոդվածում ասված է.

Սովետական պատմաբանների ուշադրության կենտրոնում պետք է լինեն վերջին տարիներին, առանձնապես ՍՄԿԿ XX համագումարից հետո բեկված ժամանակաշրջանում, պարտիայի ու ժողովրդի մեծագործությունների հետազոտությունը: Առաջնորդողում մատնանշված են ուսումնասիրության կարոտ հետևյալ հարցերը. արևելյան շրջանների ռեսուրսների, խամ ու խոպան հողերի յուրացման պատմությունը, գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեփականության երկու ձևերի զարգացումը, քաղաքի ու գյուղի մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացման պրոցեսը, հասարակական ինքնավարության նոր ձևերի առաջացումն ու զարգացումը հասարակական ֆոնդերի աճող բաշխման մեջ, կոմունիստական հասարակական հարաբերությունների ու կոմունիստական բարոյագիտության նորմաների ձևավորումը:

Հոդվածում հիշատակված է, դեռևս ՍՄԿԿ XX համագումարի ամբիոնից, պատմաբաններին հասցեագրված այն պահանջը, որ անհրաժեշտ է ստեղծել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության մի կապիտալ ուսումնասիրություն:

Հետևողականորեն ու հաստատակամորեն պայքարելով [illegible] Ստալինի անձի պաշտամունքի դեմ, պատմաբանները պետք է ցույց տան, թե մեր ժողովուրդը, մեր պարտիան ինչպես, հակառակ անհատի պաշտամունքի արգելակող ազդեցության, հաջողությամբ սոցիալիզմ էին կառուցում և մեր երկիրը տանում հաղթանակից հաղթանակ: Երեք պատմագրական կարևոր հարցերից մեկը՝ հոդվածում մատնանշված է, ականավոր բոլշևիկ, պատմաբան Մ. Ն. Պոկրովսկու գիտական գործունեության ճիշտ լուսաբանումը:

Մեր երկրի ժողովուրդները, ասված է առաջնորդող հոդվածում, հարուստ ու փառավոր ռևոլյուցիոն հայրենասիրական տրադիցիաներ ունեն: Սակայն, անհատի պաշտամունքի տարիներին անցյալի հայրենասիրական ու ազգային տրադիցիաները ուղղակի նույնացվում էին սովետական հայրենասիրության հետ: Սքողվում էին մի շարք պատմական իրադարձությունների դասակարգային բովանդակությունը, իդեալականացվում էին դրանք: Հաճախ լռության էին մատնվում ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Ցարական Ռուսաստանի մի շարք զավթողական պատերազմներ հայտարարվում էին արդարացի:

«1941 թ. Մոսկվայի ժողովրդական աշխարհազորը» հոդվածում Կ. Ա. Բելովը բերել է թվական հարուստ տվյալներ և արխիվային նյութերի հիման վրա հանգամանորեն կանգ է առել այն դերի վրա, որ Մոսկվայի աշխարհազորայինների միավորումներն ունեցան Մոսկվայի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախման գործում:

Մ. Ա. Վիլցանի հոդվածը նվիրված է կոլտնտեսային կարգին՝ Հայրենական Մեծ պատերազմի նախօրյակին, այսինքն այն ժամանակաշրջանին, երբ ավարտված էր սոցիալիզմի կառուցումը: Հոդվածում քննության են առնված կոլտնտեսային կարգի նյութա-տեխնիկական բազայի աճման, կոլտնտեսային գյուղացիության արտադրական գործունեության և նրա նյութական բարեկեցության հարցերը:

Պատմագրության բաժնում տպագրված է Վ. Վ. Մավրոդինի հոդվածը, որտեղ ամփոփված են սովետական հետազոտողների կողմից IX—XII դարերի Հին Ռուսիայի սոցիալ-տնտեսական կարգերի հետազոտության որոշ արդյունքները:

Բանավեճեր բաժնում տպագրված է Ի. Դ. Կովալչենկոյի հոդվածը XIX դարի Ռուսաստանի մանր ագրարային տնտեսաձևի ուսումնասիրության մասին: Հոդվածագիրը որոշ հարցերում համաձայնելով անցյալ տարվա երկրորդ համարում տպագրված Պ. Գ. Ռինդզյունսկու նույնանուն հոդվածի դիտողությունների ու եզրակացությունների հետ, միաժամանակ առարկում է հոդվածի մի շարք սկզբունքային դրույթների դեմ:

«Սովետական պատմագրության առարկայի և նրա պերիոդիզացիայի մի քանի սկզբունքների մասին» վերնագրով Ս. Օ. Շմիդտի հոդվածով խմբագրությունն ավարտում է այդ հարցի շուրջը սկսված բանավեճը, խոստանալով բանավեճի արդյունքներն ամփոփել առաջիկա համարներից մեկում:

Հաղորդումներ և նոթեր բաժնում հոդվածներ են հրապարակված Պետրոգրադի բանվորական Կարմիր գվարդիայի կազմի մասին, Ռուսաստանի, գաղութային ծայրամասերում ցարիզմի ֆինանսա-հարկային քաղաքականության մասին:

ՍՍՌՄ-ի պատմության ուսումնասիրությունը արտասահմանում բաժնում հրապարակված է Յու. Մ. Գարուշյանցի պատմական տեղեկանքը՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջին արձագանքները Չինաստանում: Այս համարում տպագրված է նաև բուրժուական պատմագրության դեմ մղվող պայքարում ՍՍՌՄ ԳԱ Պատմության ինստիտուտի ֆեոդալիզմի սեկտորի աշխատանքի փորձի մասին Լ. Վ. Չերեպնինի հոդվածը, որը հանդիսանում է նույն ինստիտուտի գիտական խորհրդի նիստում նրա տված զեկուցման համառոտ շարադրանքը:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ИЗВЕСТИЯ
АКАДЕМИИ НАУК СССР

ОТДЕЛЕНИЕ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

Տեղեկագրի այս տարվա առաջին թողարկումը բացվում է Վ. Վ. Վինոգրադովի «ՍՄԿԿ XXII համագումարը և բանասիրական գիտությունների խնդիրները» հոդվածով: Հեղինակը նշում է, որ գրականագիտական հետազոտողները պետք է աշխատեն այնպիսի նշանակալից գիտական պրոբլեմների վրա, ինչպես «Սոցիալիստական ռեալիզմը և մարդկության գեղարվեստական զարգացումը», «Սոցիալիստական ռեալիզմի ձևավորումն ու հաստատումը ռուս գրականության մեջ», «Սովետական գրականությունների ազգային ինքնատիպության պրոբլեմները», «Ռուս-սովետական պոեզիայի պատմությունը», «Ռուս-սովետական դրամատուրգիայի զարգացման հիմնական պրոբլեմները», «Ռուս-սովետական ժուռնալիստիկայի պատմությունը», «Ռուս-սովետական վեպի պատմությունը», «Սովետական բազմազգ գրականության պատմությունը», «Գեղարվեստական չափանիշը և ժամանակակից գրականությունը», «Ստեղծագործական մեթոդ և գրողի անհատականությունը», «Ժամանակակից ռուս-սովետական գրականությունը և ժողովրդի գաղափարա-գեղագիտական դաստիարակությունը», «Սոցիալիստական ռեալիզմի զարգացումը ժողովրդական դեմոկրատիայի երկրների գրականության մեջ», «Ազատագրական գաղափարները Արևելքի ժողովուրդների ժամանակակից գրականության մեջ» և այլն:

Ոչ պակաս պատասխանատու խնդիրներ են դրված լեզվաբանական հետազոտողների առջև: Այդ հետազոտողների գիտաշխատողները պետք է զբաղվեն այնպիսի խոշոր պրոբլեմներով, ինչպիսին են՝ ժամանակակից ռուսաց լեզվի զարգացման օրինաչափությունները, ժամանակակից ազգային լեզուների զարգացման օրինաչափությունները, ռուսաց լեզվի դերը մեր երկրի ազգային լեզուների զարգացման ընդհանուր պրոցեսում և այլ հարցեր: Առանձնապես անհետաձգելի են ռուսաց լեզվի լիակատար պատմության, ինչպես և ռուսաց գրական լեզվի լիակատար պատմության ստեղծման հարցերը:

Հեղինակը նկատում է, որ այդ նշանակալից հարցերը դեռևս չեն դարձել խոր և բազմակողմանի ուսումնասիրման առարկա:

Հեղինակը կանգ է առնում նաև գրականագիտության վրա, և նկատում, որ անհատի պաշտամունքը խիստ անդրադարձել է գրականագիտության վրա, սակայն XX և XXII համագումարները այդ բնագավառում էլ ուրվագծեցին զարգացման ուղիներ: Այժմ հերթին է դրված շատ նշանակալից պրոբլեմների մշակումը: Առանձնապես պետք է նշել 1963 թ. ավարտվող «Գրականագիտության մեթոդոլոգիայի հարցեր» կոլեկտիվ աշխատությունը, որը կբացվի «Կոմունիզմի կառուցումը և գրականագիտության խնդիրները» հոդվածով:

Սույն թողարկման մեջ տեղավորված են ՍՍՀՄ ԳԱ Գրականության և լեզվի բաժանմունքին կից Պուշկինյան հանձնաժողովի հանձնարարությամբ մի խումբ հեղինակների կողմից կազմած «Պուշկինագիտության հիմնական պրոբլեմները ժամանակակից էտապում» նյութեր:

Ժուռնալի այս թողարկման երրորդ հոդվածը վերնագրված է «Անգլերեն լեզվի գոյականների զարգացման մասին՝ նոր երկրներ վերաբնակվելուց հետո («Ջրային կենդանիների և բույսերի անունների օրինակով)»: Հոդվածի հեղինակ՝ Ն. Սմիրնովն ուսումնասիրում է Բրիտանական կղզիներից դուրս այլ երկրների անգլերեն լեզվի մեջ առաջացող նոր գոյականների ծագման ու առաջացման պատճառները, նրանց օրինաչափությունները, ինչպես և անգլերենից ռուսերենի մեջ անցած փոխառությունների հարցերը:

Ժուռնալի ներկա թողարկման մեջ տեղավորված են նաև Ի. Դ. Պաուշկինայի «Գերցենի անհայտ հոդվածը Տ. Ն. Գրանովսկու հրապարակային դասախոսությունների մասին», Վ. Ա. Պլոտնիկով-Մորինոնի «Պուշկինի բառապաշարի ուսումնասիրման հարցի շուրջը», Ա. Զ. Կոլենի, Ն. Վ. Բարանսկայայի և Ի. Ն. Վոլշտեյնի «Ներսում Պուշկինյան ֆոնդերի գանձարանում», Վ. Ի. Բորկովսկու «Ռուսերեն լեզվի պատմական շարահյուսության մշակման պատմությունից» և այլ հաղորդումներ:

«Տեսություններ և գրախոսություններ» բաժնում տեղ են գտել Ա. Ա. Զիմինի գրախոսականը Վ. Ի. Մալիշևի «Ուստ-Ցիլեմսկու XVI—XIX դարերի ձեռագիր ժողովածուները» գրքի վերաբերյալ, Պ. Ն. Բերկովի «Սրբագրություն և տեքստաբանություն» գրախոսականը՝ Օլեգ Ռիսի «Զրույցներ սրբագրչի վարպետության մասին» աշխատանքի վերաբերյալ և այլ գրախոսականներ:

Ներկա թողարկման «Խրոնիկա» բաժնում տեղավորված են տարբեր տեղեկություններ ՍՍՀՄ ԳԱ Գրականության և լեզվի բաժանմունքի աշխատանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Ռ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ